Ո՛հ երանի՛ անինջու ըղքեզ սիրողաց.
Ոչ հարք ուստերք են մայրք դստերք սիրելի,
Այլ աստուած տէր է իմ լոյս պաշտելի;
Այն որ ՚ի քեզ ելեալ մարմնով խաչեցաւ,
Ո՛հ փրկութեան դու միայն ես մեզ Դուռն.
Գունդ զուարթնոց նահատակաց ընթանան
Պսակ ՚ի գլուխ, և ընդ Գառին աստուածեան
Ընդ ընտրելոյն ըղձիւ լինուն միանան,
Ո՛հ մակաղես զհօտն ՚ի փարախ կենսական.
Ընդ որս և ինձ, ով քաւութեան փայտ կենաց,
Լեր հովանի, հարթեամ զուղին երկնընթաց,
Սատանայ հալածեա փոթորկալից փորձանաց,
Զի նաւեցից ընդ ծով աստեաց անխափան.
Այրս իմ ՚ի հուր սիրոյդ վառել անձկաց յար,
Հոգիս անինջայ կցրել ըղքո վսեմ ձեռն՝,
Մարդասիրին անքուն սիրոյն նշանակ
Ո՛հ հեղութեան նորին դու ես Յաղթանակ.

Յ. Ս. Կէօմիւրճեան.

---

Հարցաքննութիւն և հանդէս երկուց վարժարանաց աշակերտաց.

Ամսոյս մետասաներորդ օրը քաղաքիս երկսեռ վարժարանաց տարեկան հարցաքննութիւնն եղաւ. երեք օր աշակերտաց աւուրց. որք կ՚ուսանին ըրբազան պատմութիւն. տրամաբանութիւն. Ճարտասանութիւն. աշխարհագրութիւն. հայերէն և արաբերէն լեզուաց. տաճկերէն և արաբերէն, և երկու օր աշակերտուհեաց. որոց ուսմունքն են ըրբազան պատմութիւն. ազգային պատմութիւն, քերականութիւն.

Այս ուսմանց մէջ թէ աշակերտք և թէ աշակերտուհիք անաչառապէս քննուեցան թէպէտ. սակայն այսու ամենայնիւ գոհ ըլլալ պատուելի քննիչք. որով և պսակեցին Արժանապատիւ տէր Ներսէս վարդապետի և միւս քննողներ ուսուցչաց աշխատութիւնը.

17. ժամը 6 ին աշակերտաց պարգևաբաշխութեան հանդէսը սկսաւ գողտրիկ երգով մի սուրբ Աթոռոյս ճեմարանին մէջ. որ նոյնպէս զարդարուած էր ինչպէս ժառանգաւորաց հանդէսի օրը. կարդացուեցան չորս ճառ, մի քաղաքականութեան և մի գիտութեան վերայ. որոց երկու հայերէն. երրորդը տաճկերէն և չորրորդը արաբերէն ստանաւոր մի. յետոյ չորս աշակերտք արտասանած մի ներկայացուցին տրական սեռին վերաբերեալ, և հանդէսը վերջացաւ.

Հետևեալ օրը նոյնպէս չորրորդ ժամուն աշակերտուհեաց հանդէսն սկսաւ առ մայրն Հայաստան ուղղած ողբաշարժ երգով մի, ու աշակերտուհիք ընթերցան զանազան ճառեր, և ներկայացուցին գեղեցիկ տրամախօսութիւն մի հայկազանց ըրբազան պատմութեանց վրայ. այս օգտակար և միանգամայն հաճոյական բանախօսութեանը յաջորդեց մեծահանդիսութիւնը. [illegible]՝ այդ զէն յայտնի է

որ հազար հատ էին, (զորս ընդունողներուն մեր գոհունակութիւնը կը յայտնենք.) և ասեղնագործութիւնքը 250 հատր. այս աշխատութիւնքը բոլոր բանականին գոհութեան արժանի կը գտնանք. երբ միանգամայն ժամանակին ազգութեան ակնարկ մը ձգենք, որ միայն ատանամենոյ արդիւնք էր: Այսքան կարճ միջոցի մէջ այսչափ յառաջադիմութեան համար շնորհակալութիւն կը մատուցանենք ասեղնագործութեան ուսուցիչ Օ. Միւանիւցի համեստափայլ օրիորդ Վառվառէ վարժուհւոյն որ անխոնջ ջանիւք աշխատեցաւ ի յառաջադիմութիւն աշակերտուհեաց: Այն երկու աւուր հանդէսի մէջ Սրբազան Հօր ատենաբանութեան առարկայն էր ազգային դաստիարակութեան և ճշմարիտ բարոյական գիտութեան օգուտը յայտնել. ժողովուրդը դէպ ի յայն խրախուսել:

Սրբազան Հայրը կը յորդորէր բոլոր ուխտաւորները որ իրենց երկիրներուն մէջ իրենց մտադրութիւնը դարձնեն մանաւանդ սերունդին դաստիարակութեան վրայ և կը պատուիրէր քաղաքիս ժողովրդեան. որ չզլանան իրենց զաւակները ուղարկել դպրոց, որուն վրայ Ս. Աթոռս կողմէն պէտք եղածները չխնայուիր: Բաղձալի էնք որ ինչպէս երկսեռ վարժարանաց հանդէսը, նոյնպէս և Սրբազան Հօր յորդորները մեծ ազդեցութիւն գործեցին բոլոր հանդիսականաց վրայ. և յուսով ուրախ կ'ըլլանք, եթէ Երուսաղէմ այս բարոյական ձանապարհով ուխտ մը տայ բոլոր ուխտաւորաց իրենց քաղաքներու մէջ զաւակներուն դաստիարակութեան փրկարար սնունդը մատակարարելու:

# ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Զատկական տօնի պատճառաւ ինչպէս անցեալ տարիներ՝ այս տարի ևս Եւրոպացի երեւելեաց յաճախութիւն տեղի ունեցաւ, որոց մէջ երեւելի էին մէկ քանի Ռուսիոյէք. Անգլիական Ռուսիոյ Ջեներալ Կոնսուլը. և Ռուսաց Արք Եպիսկոպոս մի, որոնք հաճեցան ներկայ գտնուիլ Ս. Զատկի երկուշաբթի աւուր տօնը Յակոբայ մայր տաճարին մէջ կատարուած փառաւոր հանդիսին. ինչպէս Ս. Քաղաքիս Վսեմ. Կառավարիչ Նազիֆ փաշային ևս իւր ներկայութեամբը պատուեց զմիաբանութիւնս. Այն առթերը դրած ժամանակներս յիշեցնել կուտայ մեզ պատմութեան հինգ դար յառաջ Լուսինեանց թագաւորութիւնը. և Ս. Քաղաքիս մէջ մեր նախնեաց ըրած փառաւոր հիւրընկալութիւնները այն իշխանաց՝ որ դժբախտ հայուն փառաւոր յիշատակութեանց վերջին նկարագիրը կը ներկայացնէին: Հինգ դար յառաջ կլսենք. երբ արդի Լատինաց միաբանութիւնն՝ որ ս. ժամ միջոց միջոց իւր իշխանազուն այցելուներովը կը պարծենայ, Լատին միաբանութիւնը կլսենք այն ժամանակը՝ որ փոքրիկ խումբ մի կը կազմէր. և թէ այն ժամանակ մի խաչակրաց տաճար քաղաքիս մէջ առաջին բարձն ունեցած է. բայց անյարատեւութեան մէջ փոքրիկ խմբոյ մը տեղւոյն կերպարանք մի ունէր. Հայ Միաբանութիւնս մէջ ուրախութիւ առաջին բարձն ունէր շնորհիւ և առ դեցութեամբ և այցելութեամբ իւր արքայազուն իշխանաց, և թագաւորին խակ: Բայց այսօր երբ վերյիշեալ ուխտը կը մխիթարուի Իշխաններովը. միաբանութիւս իւր մխիթարութիւնը Հայաստանի դժբախտ Հայաստանի խեղճ որդւոյը շնորհին է. որոնք պանդուխտ պատուելներէ կուգան ոչ այնչափ հա-